Արձանագրություն N 2
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 օգոստոսի 2025թ
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Անի Ջանոյանը
անդամներ՝ Ալիսա Հայրապետյանը, Արա Վարդանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Անի Ջանոյան)

1. Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	***Մասնակցի անվանումը***		***Մասնակցի հասցեն և կապի միջոցները***
1	***2***		***3***
1	«ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ	-	Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մաշտոցի 67շ. 19բն., հեռ.077 03 50 55, b2gllc@gmail.com
2	«Արվադա գրուպ» ՍՊԸ	-	ք. Երևան, Սայաթ-Նովա 33, բն.71, հեռ. 055824082, arvadagroupllc@gmail.com
3	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	-	ԱՐԱՐԱՏ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ 30, հեռ. 077337513, gnumner2024@mail.ru
4	Մաքս Շին ՍՊԸ	-	ք. Երևան, Երևան-էջմիածին խճ 12, Պտղունք , հեռ. 077808088, maxshin2021@mail.ru

1.1 Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Չափաբ. համարը	Գնման առարկան			Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)				Գնման գինը /ՀՀ դրամ/
	անվանումը	Չափի միավորը	քանակը	ԲԻ ԹՈՒ ՋԻ ՍՊԸ	«Արվադա գրուպ» ՍՊԸ	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	Մաքս Շին ՍՊԸ	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	դռան փականի մեխանիզմ	հատ	40	72000	74000	100000000	43434344343	100000
2.	դռան փականի մեխանիզմ	հատ	40	77482	74000	100000000	4334343444	100000
3.	դռան փականի միջուկ	հատ	298	307000	312000	100000000	360000	447000

1.2 Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Անի Ջանոյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-3-րդ չափաբաժինների համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ի և «Արվադա գրուպ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և արձանագրեց, որ.

1) «Արվադա գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2) «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես.

ա/ «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած՝ դիմում հայտարարությունը (հավելված 1), իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը (հավելված 1.3) էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված չէ: Հրավերի 8.19 կետով սահմանված պահանջների համաձայն՝ մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Եթե հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ), ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

3. «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ -ի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար, «Մաքս Շին» ՍՊԸ-ի 1-ին, 2-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են հրավերով սահմանված գնման գինը:

4. էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել են «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար, «Մաքս Շին» ՍՊԸ-ի 1-ին, 2-րդ չափաբաժինների համար ներկայացրած հայտերը հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է հրավերով սահմանված գնման գինը:

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Արվադա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

բ) մերժել համակարգի կողմից մերժված, 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 41-րդ կետի իրավակարգավորումներով և հրավերի 8.11 կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2025թ. օգոստոսի 28-ին ժամը 10:20-ին ք. Երևան, Նալբանդյան 13, հասցեում:

Հանձնաժողովի		
նախագահ	_____	Անի Ջանոյան
անդամներ՝	_____	Ալիսա Հայրապետյան
	_____	Արա Վարդանյան
քարտուղար՝	_____	Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 26 օգոստոսի 2025թ.

ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Ջանոյանս, անդամներ՝ Ալիսա Հայրապետյանս, Արա Վարդանյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Անի Ջանոյան

անդամներ՝ _____ Ալիսա Հայրապետյան

_____ Արա Վարդանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

Արձանագրություն N 3
ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 օգոստոսի 2025թ
ժամը 10:20

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Անի Ջանոյանը
անդամներ՝ Ալիսա Հայրապետյանը, Արա Վարդանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտի գնահատման արդյունքների մասին

(Անի Ջանոյան)

1. Սահմանված ժամկետում «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով՝ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով հանձնաժողովին է ներկայացրել հայտի փաստաթղթերի նոր տարբերակները:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած հայտի փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Անի Ջանոյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:

բ / «Արվադա գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել բավարար գնահատված և էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Անի Ջանոյան)

4. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Անի Ջանոյան

անդամներ՝ _____ Ալիսա Հայրապետյան

_____ Արա Վարդանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան